# ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1990-2001թթ.)

ՊՈՂՈՍՅԱՆ Է. Վ.

*Հայաստանի անկախության վերականգնումից հետո բավական բարեհաջող ձևով սկսվեցին և վերընթաց կորագծով շարունակեցին զարգանալ հայ-իրանական հարաբերությունները:*

*Իրանի Իսլամական Հանրապետության բացառիկ նշանակությունը տարածաշրջանային քաղաքականության ոլորտում և մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար պայմանավորված էր քաղաքական-տնտեսական մի շարք գործոններով, ինչպես՝ Իրանի զգալի դերակատարությունը ողջ իսլամական աշխարհում, մեծ ազդեցությունը, այսպես կոչված, «երրորդ աշխարհի» երկրներում, հեղինակավոր մի շարք միջազգային կառույցներում, այդ թվում՝ Տնտեսական համագործակցության կազմակերպության (ԷԿՕ), Կասպից ծովի ավազանի երկրների կազմակերպության, Նավթարդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ), Չմիացած երկրների շարժման մեջ: Արժե նշել նաև Իսլամական կոնֆերանսի շրջանակում ունեցած նրա ծանրակշիռ դերը:*

*Անշուշտ, Հայաստան-Իրան բարեհաջող փոխհարաբերություններում առաջնահերթ էին երկկողմ տնտեսական շահերը, որոնք, համադրվելով որոշակի զարգացման միտում ունեցող տարածաշրջանային գործընթացներին, ավելի քան բավարար հիմք էին ստեղծել փոխհարաբերությունների կայուն զարգացման համար: Քաղաքական առումով Իրանի հետ համագործակցությանն ի սկզբանե մեծապես նպաստում էր Ղարաբաղի հարցի արդարացի լուծման կապակցությամբ նրա ցուցաբերած դիվանագիտական ակտիվությունը: Վերջապես, ինքնիշխանության հաստատման ուղիով ընթացող Հայաստանի համար Իրանի հետ հարաբերությունները հնարավորինս սերտացնելու ձգտումը բխում էր նաև հազարամյակների փոխհարաբերություններ ունեցող երկու ժողովուրդների պատմական, էթնիկ և մշակութային զգալի ընդհանրություններից:*

*Այդ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի նախադրյալների հաշվառմամբ էլ Հայաստանը հաստատեց և հետագայում էլ հետևողականորեն զարգացնում էր իր հարաբերությունները սահմանակից հարևաններից մեկի՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Ինչ վերաբերում է Իրանի աշխարհաքաղաքական ուղեգծին և տարածաշրջանում դիվանագիտական եռանդուն գործունեությանը, ապա այն շատ կողմերով համընկնում էր հայ ժողովրդի ազգային շահերին, որոնց խստիվ հաշվառմամբ արտաքին աշխարհում գործողությունների ծավալումը պետական ինքնիշխանություն վայելող Հայաստանի անկապտելի իրավասությունն էր: Խորհրդանշական է, որ Իրան-Հայաստան առնչություններն սկսվել էին ավելի շուտ, քան այդ երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատվելը: Այսպես, Հայաստանի Հանրա-*

պետության և Իրանի Իսլամական Հանրապետությունների միջև պաշտոնական հարաբերությունների հաստատումից առաջ՝ 1992 թ. հունվարի վերջին հիմք դրվեց երկու երկրների մայրաքաղաքների միջև օդային հաղորդակցությանը: Ի դեպ, հենց Թեհրան-Երևան առաջին չվերթով Հայաստան էին ժամանել նաև պարսկական մի քանի ֆիրմաների ղեկավարներ՝ Երևանի քաղաքային իշխանությունների հետ առևտրատնտեսական կապեր հաստատելու նպատակով բանակցություններ վարելու[1]:

1992 թ. փետրվարին ՀՀ արտգործնախարար Ռ. Հովհաննիսյանի գլխավորած ներ-կայացուցչական պատվիրակության՝ ԻԻՀ կատա-րած պաշտոնական այցի ժամանակ Իրանի իշխանությունների հետ քննարկումների ընթացքում որոշակիացել էին երկու երկրների միջև նոր-նոր ձևավորվող առևտրատնտեսական համագործակցության հնարավոր ուղղությունները: Որպես այդպիսիք նշվել էին մասնավորապես էներգետիկայի, տրանսպորտի (ներառալ՝ երկաթուղային), կապի, սահմանամերձ առևտրի և փոխգործունեության այլ բնագավառներ: Հենց առաջին պաշտոնական այցի ընթացքում, վստահության մթնոլորտում, քննարկվել էին նաև Ղարաբաղի իրավիճակի հետ կապված հարցեր[2]: Բանակցությունների շնորհիվ ստորագրվել էր երկու երկրների միջև համագործակցության սկզբունքների և մտադրությունների՝ 27 կետից բաղկացած ծավալուն հռչակագիրը[3]: Դա ՀՀ արտգործնախարարի այցի կարևորագույն արդյունքն էր, քանզի հռչակագիրը Հայաստանի և Իրանի միջև լիակատար դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին էր[4]: Արտաքին գործերի գերատեսչությունների մակարդակով միջպետական փոխհարաբերությունների սկզբնավորման գործընթացում կարևոր էր նաև 1992 թ. մարտին երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև կնքված՝ պարբերաբար քաղաքական կոնսուլտացիաներ անցկացնելու մասին, ինչպես նաև առևտրատնտեսական համաձայնագրերը[5]: Հայ-իրանական հարաբերությունների սերտացման առումով չափազանց կարևոր էր Լեռնային Ղարաբաղում պատերազմական գործողությունների հետագա ծավալումը կանխելու, Արցախի հիմնահարցի քաղաքական լուծման ուղիներ որոնելու նպատակով 1992 թ. սկզբին ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայեթիի այցը Անդրկովկաս և մասնավորապես Հայաստան: Փաստորեն, այդ քայլով Իրանը ստանձնում էր հայ-ադրբեջանական առճակատման դադարեցմանն ուղղված միջազգային միջնորդական առաքելություն, որը, բնականաբար, Հայաստանում գտավ ջերմ աջակցություն[6]: Իրանը միջնորդական գործունեության մեջ զգալի ներդրում ունեցավ: Մասնավորապես, տարածաշրջան պաշտոնական պատվիրակություններ առաքելու, ինչպես նաև Ադրբեջանի և Հայաստանի իշխանական համապատասխան

[1] Հայաստանի Հանրապետություն, 1.II.1992:
[2] Նույն տեղում, 11.II.1992:
[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 14-15:
[4] Հայաստանի Հանրապետություն, 13.II.1992:
[5] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 68, թ. 14:
[6] Հայաստանի Հանրապետություն, 27,28, 29.II.1992:

*օղակների ներկայացուցիչներ Իրան հրավիրելու և նրանց միջև ուղղակի երկխոսություն կազմակերպելու միջոցով մշակվել էր հակամարտող կողմերի հավանությանն արժանացած փաթեթային համաձայնագրի մի նախագիծ: Այն միտված էր հավանական զինադադարի մասին 1992 թ. ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո դրա պահանջները երկուստեք հարգելու լծակների ստեղծմանը, կրակի դադարեցմամբ ստանձնած պարտավորությունների անվերապահ կատարմանը և նման պայմաններում բուն դարաբաղյան հիմնահարցի շուրջ բանակցություններ սկսելուն[7]: Սակայն այդ նախագծին վիճակված չէր կենսագործվելու, քանզի Ադրբեջանը չկամեցավ որպես բանակցային կողմ ճանաչել Արցախին[8], մինչդեռ իրողությունն այն էր, որ առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանության ներկայացուցիչների մասնակցության ցանկացած մակարդակի քննարկումներ ու ձեռք բերված պայմանավորվածություններ կմնային որպես սոսկ հայտարարություններ:*

*Սակայն այդ փուլում միջնորդական գործունեության անհաջողությունը չխաթարեց տարածաշրջանում անդորրի ու կայունության հաստատմանը գործուն աջակցություն ցուցաբերելու Իրանի վճռականությունը, և Պարսկաստանը հետագայում ևս շարունակեց ադրբեջանա-դարաբաղյան զինված հակամարտությունը խաղաղ կերպով լուծելու իր դիվանագիտական գործունեությունը:*

*Ինչպես տեսնում ենք, միջպետական կապերի ձևավորման և զարգացման առումով չափազանց արդյունավետ է եղել տակավին 1992 թվականը: Այդ տարի երկու երկրների միջև կնքված կարևորագույն փաստաթղթերի մեջ հայ-իրանական փոխգործունեության գործընթացներում իր ուրույն տեղն ունի «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը[9]:*

*Վերոնշյալ, ինչպես նաև մի շարք միջպետական այլ համաձայնություններ սկիզբ դրեցին Իրանի հետ Հայաստանի փոխշահավետ համագործակցությանը, որը բխում էր բարիդրացիական հարաբերությունների ավանդույթներ ունեցող երկու ինքնիշխան ժողովուրդների շահերից: ԻԻՀ արտգործնախարարի արդեն հիշատակված այցի ընթացքում հայկական կողմի հետ լրջորեն քննարկվել էին, օրինակ, Իրան-Հայաստան գազատարի շինարարությանն առնչվող տեխնիկական խնդիրները, Մեղրու հատվածում ժամանակավոր ավտոճանապարհային կամրջի կառուցման հարցը և այլն: Փաստերը վկայում են, որ և Հայաստանը, և Իրանը սկզբից ևեթ ձգտում էին հնարավորինս արագ կենսագործել համագործակցության՝ բոլոր ուղղություններով ձեռք բերված համաձայնությունները[10]:*

---

[7] *Նույն տեղում, 17,20.III.1992:*

[8] *Նույն տեղում, 7.V.1992:*

[9] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 235, թ. 1-6:*

[10] *Նույն տեղում, գ. 172, թ. 1-5:*

Կամուրջի կառուցման ավարտին զուգընթաց ավելի էին որոշակիանում Իրանից Հայաստան նավթամթերք առաքելու, ճանապարհները փոխադարձաբար տրամադրելու, սահմանամերձ, ինչպես նաև լայնածավալ առևտուր կազմակերպելու մասին քննարկումները երկու երկրների պատկան մարմինների միջև[11]:

1993 թ. փետրվարին Արաքսի ժամանակավոր կամրջով անցավ բենզինատարների առաջին շարասյունը, որը Իրանից բերել էր այդ օրերի հույժ կարևոր ապրանքը՝ վառելանյութ: Մեղրիում իրանական կողմը տեղադրել էր երկու գերժամանակակից լիցքակայան, որոնցով մատչելի գներով բենզին էր վաճառվում ինչպես տեղական կարիքների, այնպես էլ Հայաստանի այլնայլ շրջանները էներգակիրներով ապահովելու համար[12]: Բոլոր բնագավառներում երկկողմ հարաբերությունների հետագա աշխուժացման առումով նշանակալից էր 1992 թ. մայիսին ՀՀ առաջին նախագահի գլխավորած պետական պատվիրակության այցը Իրան[13], որի ընթացքում ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև համագործակցության, բարեկամության, բարիդրացիության մասին համատ եղ հայտարարությունը»[14]: 21 հոդվա-ծից բաղկացած այս փաստաթղթում ընդգծված էին քաղաքականության, տնտեսության, գիտության, մշակույթի, կրթության բնագավառներում երկկողմ կապերը առաջիկայում ևս զարգացնելու՝ Հայաստանի և Իրանի մտադրությունները: Կարևոր էին հատկապես Արաքսի վրա մշտական կամրջի շինարարական աշխատանքների արագացման նպատակով միջոցառումների իրականացման մասին պայմանավորվածությունը և հյուպատոսական կապերի, մաքսատան ու սահմանի մասին համաձայնագրերը[15]: Հայ-իրանական երկկողմ հարաբերությունների, քաղաքական, առևտրատնտեսական, մշակութային և այլ բնագավառներում պաշտոնական ամենատարբեր մակարդակներում փոխշահավետ համագործակցության, միջխորհրդարանական կապերի հաստատման վերաբերյալ տեղի ունեցած բանակցությունների շնորհիվ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև Թեհրանում ստորագրվեցին միջպետական բազմաբնույթ փաստաթղթեր[16]: Կնքվեց, այսպես կոչված, «Պետությունների ղեկավարների Թեհրանի հայտարարությունը»[17] Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, որում նշված էին հակամարտության՝ այդ պահին կողմերի համար հնարավոր թվացող, կարգավորման ուղիները, որոնք սահմանվել էին հետևյալ հաջորդականությամբ՝ հրադադար և հաղորդակցության ուղիների միաժամանակյա, անհապաղ ապաշրջափակում, տնտեսական շրջափակման վերացում, միջազգային դիտորդների գործուղում ճգնաժամային շրջան, գերիների փոխանակում, գաղթականների

[11] Հայաստանի Հանրապետություն, 28.III.1992:
[12] Նույն տեղում, 6.II.1993:
[13] Նույն տեղում, 7, 8, 9.V.1992:
[14] Նույն տեղում, 12.V.1992:
[15] Նույն տեղում, 9.V.1992:
[16] Նույն տեղում, 7.V.1992:
[17] Նույն տեղում, 9,12.V.1992:

*խնդրի փոխադարձ լուծում և այլն: Այդպիսով, կարելի է ասել, որ խնդրո առարկա ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծումը կարծես թե գտնվել էր և անչափ մոտ էր թվում:*

*Սակայն մայիսի սկզբներին հայ-ադրբեջանական առճակատման ընթացքում տեղի ունեցած ռազմաքաղաքական կտրուկ փոփոխությունների հետևանքով ադրբեջանական կողմի անզիջում դիրքորոշումը[18] ձախողեց ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ լուծման այդ հնարավորությունը:*

*Ի տարբերություն քաղաքական բնագավառում համագործակցության համեմատաբար դանդաղ քայլերի, մեծ թափով էին զարգանում հայ-իրանական տնտեսական կապերը: Տակավին երկու երկրների փոխհարաբերությունների ձևավորման շրջանից նրանց համար հրատապ էր Աշտարա-Թավրիզ-Մեղրի մոտ 150 կիլոմետրանոց գազատարի շինարարության հարցը: Սկզբնական շրջանում, երբ շինարարության իրականացման բարդությունները հիմնականում ներկա-յանում էին որպես տեխնիկական բնույթի խնդիրներ, նախատեսվում էր գազատարի շինարարությունն ավարտել ոչ ուշ, քան մինչև 1995 թ.[19]: Սակայն երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի երկու կողմերին էլ պարզ դառնար, որ դա ամենևին էլ միայն երկու ինքնիշխան երկրների խնդիրը չէր, և տարածաշրջանային զարգացումներն անորոշ ժամանակով հետաձգեցին խնդրի գործնական լուծումը: Այդ ժամանակահատվածում կողմերի միջև լուրջ բանակցություններ էին ընթանում նաև Իրան-Հայաստան նավթամուղ անցկացնելու, Հայաստանում նավթամշակման գործարան կառուցելու մասին և այլն: Եվ հենց այդ բանակցությունների շնորհիվ էլ պայմանագիր ստորագրվեց Իրանից Հայաստան մազութ ներկրելու մասին[20]: Հայաստանը ԱՊՀ երկրներից վառելանյութերի փոխադրման համար վճարում էր նույնքան, որքան հենց էներգակիրների համար: Բացի այդ, համագործակցության անդամ-երկրներում էներգակիրների գները միտված էին դեպի համաշխարհային չափանիշները, իսկ Իրանի վառելանյութի աղբյուրները գտնվում էին Հայաստանի Հանրապետության սահմանից ընդամենը 200 կմ հեռավորության վրա: Եվ միանգամայն բնական էր, որ, անկախ քաղաքական լուծումներից, ՀՀ տնտեսությունը էներգակիրների առումով ավելի ու ավելի որոշակի էր դրսևորում հարևան Իրան կողմնորոշվելու հակվածություն, և այդ առումով մեծանում էր Արաքսի՝ նախ, ժամանակավոր, իսկ հետագայում նաև մշտական կամրջի դերը: Միջպետական կամուրջը մեծապես նպաստելու էր երկու երկրների միջև իրականացվող առևտրի կազմակերպմանը: Այսպես, Իրան-Հայաստան առևտրատնտեսական հարաբերությունների սաղմնավորման շրջանում՝ 1992 թ. ընթացքում, Մեղրու կամրջով Իրանից Հայաստան էր մտել 450 տոննա բեռ, իսկ միայն 1993 թ. հունվար ամսին Հայաստանից*

---

[18] *Նույն տեղում, 13.V.1992:*

[19] *Նույն տեղում, 19.V.1992:*

[20] *Նույն տեղում:*

հարևան երկիր էր առաքվել 180 տոննա բեռ[21]: Հասկանալի է՝ բերված թվերը, եթե հաշվի առնենք երկու երկրների հնարավորությունները, չափազանց համեստ էին, սակայն այդ փաստերը վկայում էին, որ երկկողմանի առևտուրը հետագա զարգացման միտումներ ուներ: Մանավանդ որ Իրանում այդ շրջանում մեծ պահանջարկ ունեին Հայաստանում արտադրվող էլեկտրատեխնիկական իրերը, էլեկտրական լամպերը, էլեկտրաշարժիչները: Իրանը Հայաստանի համար էական շուկա էր նաև արտադրական կոոպերացիայի և որոշ ծառայությունների առումով[22]: Իսկ իրանական կողմից դեպի Հայաստան, բացի էներգակիրներից, ներկրվում էր նաև թեթև, քիմիական, սննդի արդյունաբերության արտադրանքների բավական մեծ տեսականի: Ժամանակավոր կամրջի գոյության պարագայում երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը 4 տարվա ընթացքում ավելացել էր շուրջ 15 անգամ, իսկ մշտական կամրջի շահագործմամբ նախատեսվում էր այդ ցուցանիշը կրկնապատկել [23]: Հարկ է նշել, որ այդ կանխատեսումը լիովին իրականացավ: Այսպես, միայն 2000 թ. ընթացքում, Արաքսի մշտական կամրջի շահագործումից 4 տարի անց, ցամաքային ճանապարհով Իրանից Հայաստան էին տեղափոխվել մոտ 51 հազար տոննա էներգակիրներ. դա մոտ 114 անգամ ավել էր, քան 1992 թ. Պարսկաստանից ներկրված բոլոր տեսակի ապրանքների ընդհանուր ծավալը[24]: Հայ-իրանական փոխշահավետ տնտեսական համագործակցության մեջ ի սկզբանե կարևորվել էր նաև այլ երկրներից Պարսկաստանի տարածքով Հայաստան ապրանքների ներմուծումը: Այսպես, Հայաստանի համար դժնդակ 1993 թ. հենց Իրանի տարածքով, հիրա- վի կյանքի ճանապարհի համբավ վայելող Արաքսի կամրջով շատ անհրաժեշտ այլ ապրանքատեսակների հետ Հայաստան էին ներմուծվում նաև սոցիալական ծանր կացության մեջ հայտնված ազգաբնակչության համար այնքան անհրաժեշտ ցորեն ու կարագ՝ Ավստրալիայից ու Նոր Զելանդիայից[25]:

Հետագայում էլ Իրանի տարածքով հատկապես արդյունաբերական արտադրանք էր բերվում Արաբական Միացյալ Էմիրություններից: Նույնիսկ ամենապարզ հաշվարկները վկայում են, որ երկու պետությունները միմյանց հետ կապող ժամանակավոր կամրջի գործունեության վերջին տարում՝ 1995 թ., դրանով հաղորդակցության դադարեցման պարագայում Հայաստանում մեկ շաբաթվա ընթացքում գները կաճեին ավելի քան երկու անգամ[26], այսինքն, անմիջապես տեղի կունենար բնակչության՝ առանց այն էլ ցածր կենսամակարդակի ևս 100 տոկոսի անկում:

Իրանի Իսլամական Հանրապետությունից և տարանցման կարգով Պարսկաստանի տարածքով ուրիշ երկրներից Հայաստան բազմատեսակ բեռների ներկրման

---

[21] Նույն տեղում, 19.II.1993:

[22] Նույն տեղում:

[23] Նույն տեղում, 5.V.1995:

[24] **Մելքումյան Ս.,** Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Ե., 2002, էջ 236:

[25] Հայաստանի Հանրապետություն, 19.II.1993:

[26] Նույն տեղում, 26.XII.1995:

ծավալները կտրուկ մեծացան 1996 թ. հունվարին՝ Արաքս գետի վրա կառուցված մշտական կամրջի շահագործմամբ. Արաքսի կամուրջը, ըստ էության, հայ-իրանական առաջին համատեղ կառույցն էր[27]:

1994 թ. առանձին պայմանագիր ստորագրվեց Մեղրու շրջանի և Իրանի Մարանդի գավառի միջև սահմանամերձ առևտրի մասին[28]: Երկու երկրների միջև սահմանային առևտրի զարգացումը խթանելու նպատակով սահմանվել էին տարբեր կարգի զեղչեր: Այսպես՝ երբ ներմուծվող և արտահանվող ապրանքների արժեքը չէր գերազանցում ԱՄՆ հազար դոլարը, ապա հայկական կողմը, կառավարության որոշմամբ, նման գործարքներից հարկ չէր գանձում[29]: Սակայն, չնայած արդեն իրականացված աշխատանքների մեծ ծավալին, աշխարհում ու հատկապես տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական անբարենպաստ գործընթացների պատճառով, և՛ Իրանի, և՛ Հայաստանի համար տնտեսական խոշորամասշտաբ օգուտներ խոստացող այդ նախաձեռնության իրագործումը տվյալ ժամանակաշրջանում հետաձգվեց[30]:

Երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը մեծապես նպաստում էին այդ նպատակով ձևավորված ինչպես տեղական, այնպես էլ միջպետական կառույցները: Հատկապես արդյունավետ էին Իրանում և Հայաստանում ստեղծված հայ-իրանական տնտեսական կապերի համակարգման հանձնաժողովները[31], որոնք որոշ՝ երկու երկրների համար էլ բացառիկ նշանակության հարցերի քննարկումներն իրականացնում էին միացյալ ուժերով՝ այդպիսով վերածվելով միջպետական կառույցի[32]: Ե՛վ ՀՀ-ում, և՛ ԻԻՀ-ում այդ հանձնաժողովները կարևորագույն շահագրգիռ նախարարությունների մասնակցությամբ մեծածավալ աշխատանք էին կատարում երկկողմ հարաբերությունների զարգացման ռազմավարությունը մշակելու և մարտավարական ընթացիկ խնդիրներ լուծելու ուղղությամբ: Հայ-իրանական տնտեսական կապերի համակարգման հանձնաժողովների շահագրգիռ և նպատակասլաց գործունեության շնորհիվ տակավին 1992, 1993 թ. կողմերի միջև նախնական համաձայնություններ կայացվեցին Իրան-Հայաստան գազատարի կառուցման մասին, և հենց այդ պահից էլ սկսվեցին ապագա գազատարի նախագծային հետազոտական աշխատանքները[33], որոնք ավարտվեցին արդեն 1994 թ. ամռանը: Ըստ երկկողմանի ստանձնած պարտավորությունների, սկզբնական շրջանում նախատեսվում էր նորաբաց գազատարով ներմուծել 3 մլն խորանարդ մետր գազ, որով

[27] Նույն տեղում, 11.I.1996:
[28] ՀԱԱ, ֆ. 113, ց. 119, գ. 161, թ. 1-3:
[29] Նույն տեղում, ց. 171, գ. 259, թ. 1-2:
[30] Հայաստանի Հանրապետություն, 1.VII.1994:
[31] Նույն տեղում, 18.IX.1996:
[32] Հայաստան 1998-2007, խմբ.՝ Վարդանյան Ա., Ե., 2008, էջ 81:
[33] ՀԱԱ, ֆ. 113, ց. 169, գ. 97, թ. 1-3, Հայաստանի Հանրապետություն, 9.X.1993:

կկրկնապատկվեր Հայաստան մտնող կապույտ վառելիքի քանակը[34]:

1995 թ. այդ հանձնաժողովների միացյալ գործունեության շնորհիվ ստորագրվեցին նախարարությունների, գերատեսչությունների, պետական ու մասնավոր ձեռնարկությունների, անհատ ձեռներեցների՝ ամենատարբեր բնագավառներում աշխույժ փոխգործակցու- թյան անհրաժեշտ հիմքերի ապահովմանը նպատակաուղղված բազմաթիվ կարևոր փաստաթղթեր, բացվեց իրանական «Մելլաթ» բանկի մասնաճյուղը Երևանում[35], որով էլ հիմք դրվեց նաև բանկա- յին բնագավառում երկու երկրների համագործակցությանը: Մայիսին սկզբունքային պայմանավորվածություններ ձեռք բերվեցին 1992 թ. պարբերաբար քննարկվող Իրան-Հայաստան գազամուղի կառուցման, ինչպես նաև ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև էլեկտրահաղորդման բարձր լարվածության գիծ անցկացնելու վերաբերյալ[36]: Գազամուղի շինարարության մասին վերջնական պայմանագիրը կնքվեց 1997 թ., իսկ էլեկտրահաղորդման գծի կառուցումն ավարտվեց ռեկորդային կարճ ժամանակահատվածում՝ 1997 թ. սկզբներին: Միջ- պետական համագործակցության տպավորիչ արդյունքները ոգևորում էին կողմերին նոր, ավելի մասշտաբային ծրագրեր մշակելու գործում: Այսպես, 1997 թ. երկու երկրների համապատասխան գերատեսչությունների միջև բանակցություններ սկսվեցին Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայան կառուցելու վերաբերյալ[37]:

2001 թ. սկսվեցին 75 մվտ հզորությամբ հիդրոէլեկտրակայանի նախագծային աշխատանքները, որոնք իրականացնում էր հայ-իրանական նորաստեղծ համատեղ ձեռնարկությունը[38]:

Հայ-իրանական տնտեսական հարաբերությունների ամրապնդման գործում կարևոր ներդրում ունեցավ նաև հանրապետության առևտրաարդյունաբերական պալատը[39]: Իսկ քիչ ավելի ուշ ձևավորված իրանա-հայկական պալատը միայն 1997-1999 թթ. հայկական շուկայի հետագա զարգացման համար ներդրել էր շուրջ 100 մլն ԱՄՆ դոլար[40]:

Հայ-իրանական բարիդրացիական կապերի խոսուն վկայություն էր նաև սահմանի հատման հնարավորինս պարզեցված կարգը, որի շնորհիվ նորանկախ Հայաստանի և Իրանի միջև հարաբերությունների ձևավորման ամենասկզբնական շրջանից ի վեր տեղի էին ունենում երկու երկրների քաղաքացիների բազմաթիվ փոխայցելությունները:

Հայ-իրանական առևտրատնտեսական կապերի կայացման և ամրապնդման գործում մեծ դեր ունեին 1993 թվականից Երևանում պարբերաբար կայացող՝ Իրանի

---

[34] Հայաստանի Հանրապետություն, 22.VII.1994:
[35] Նույն տեղում, 12, 14.I.1995:
[36] Նույն տեղում, 19.V.1992, 7.V.1995:
[37] Նույն տեղում, 25.II.1997:
[38] Նույն տեղում, 27.IV.2001:
[39] Նույն տեղում, 11.III.1994:
[40] Նույն տեղում, 7.IX.2000:

*արտադրության ապրանքների ցուցահանդես-վաճառքները [41]: Դրանց ընթացքում հայ գործարարները ոչ միայն ծանոթանում էին իրանական ապրանքներին, այլև վարում էին որոշակի փոխշահավետ բանակցություններ, ձեռք բերում պայմանավորվածություններ, կնքում երկարաժամկետ համաձայնագրեր երկկողմանի առևտրատնտեսական արդյունավետ համագործակցություն իրականացնելու համար: Այդ իմաստով նախորդներին չէր զիջում նաև 2000 թ. Երևանում կայացած իրանական ապրանքների՝ թվով արդեն 7-րդ ցուցահանդեսը[42]: Իրանում էլ կազմակերպվում էին հայկական ապրանքների ցուցահանդեսներ:*

*Միջպետական փոխշահավետ առևտրատնտեսական կապերի սերտացմանն ուղղված երկկողմանի ջանքերի շնորհիվ տնտեսական փոխգործակցությունն ունեցավ դինամիկ զարգացում: Այսպես, եթե տնտեսական կապերի հաստատման սկզբնական շրջանում՝ 1994 թ., երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել էր 57 մլն դոլարից քիչ ավելի, ապա արդեն 1995 թ. այդ ցուցանիշը ավելի քան կրկնապատկվեց՝ հասնելով մոտ 125 մլն դոլարի, իսկ 1996 թ. հասավ մոտ 194 մլն դոլարի[43]: Երկար ժամանակ Իրանը Հայաստանի երկրորդ գլխավոր տնտեսական գործընկերն էր, Ռուսաստանից հետո[44]: Չնայած այն հանգամանքին, որ, 1999-2000 թթ. տվյալներով, ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև ապրանքաշրջանառությունը որոշ չափով նվազել էր և կազմում էր մոտ 113 մլն դոլար[45], իսկ 2001 թ.՝ մոտ 83 մլն 400 հազար դոլար[46], սակայն, այնուամենայնիվ, Իրանը մնում էր աշխարհում Հայաստանի տնտեսական երրորդ գործընկերը Ռուսաստանից և Բելգիայից հետո[47]: Ի դեպ, առևտրի ծավալների նվազումը պայմանավորված էր ոչ թե տնտեսական առումով միմյանց նկատմամբ հետաքրքրության թուլացմամբ, այլ այն հանգամանքով, որ Իրանից նախկինում ներկրվող ապրանքատեսակների մի մասի արտադրությունը, որոշ դեպքերում հենց իրանական կողմի աջակցությամբ, արդեն կազմակերպվել էր Հայաստանում: Այսպես, օրինակ, Իրանից ներկրվող մշակված բազմատեսակ շինարարական քարերի ներմուծումը կտրուկ նվազեց, երբ Իրանից ներմուծված քար մշակող-կատարելագործված հոսքագծերի կիրառմամբ 2001 թ. Սյունիքում հիմնվեց քարամշակման ձեռնարկություն: Հետագայում նույն կերպ քարամշակման ձեռնարկություններ հիմնվեցին նաև Հայաստանի այլ վայրերում, այդ թվում և Երևանում: Տվյալ ժամանակահատվածում պայմանավորվածություն էր ձեռք բերվել նաև Կապանի կոշիկի ֆաբրիկայի բազայի վրա, Պարսկաստանից ներմուծվող հումքի օգտագործմամբ, համատեղ ձեռնարկություն ստեղծելու մասին[48]:*

*Իհարկե, միշտ չէ, որ հայ-իրանական հարաբերությունների զարգացումը ընթացել է առանց խոչընդոտների: Դա միանգամայն հասկանալի է. շատ արմատական հարցերում երկու երկրների շահերի ընդհանրությունը ամենևին էլ չէր նշանակում բոլոր բնագավառներում դրանց կատարյալ համընկնում: Այսպես, 1993 թ. գարնանը, ԼՂՀ զինված ուժերի տարած*

---

[41] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 170, գ. 262, թ. 1-2, ց. 171, գ. 432, թ. 1:*

[42] *Հայաստանի Հանրապետություն, 7.IX.2000:*

[43] *Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1995, 1996, Ե., 1998, էջ 180:*

[44] *Հայաստանի Հանրապետություն, 10.IX.1994, 6.I.1995:*

[45] **Մելքումյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 255:*

[46] **Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ.,** *Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Ե., 2002, էջ 124:*

[47] *Հայաստանի Հանրապետություն, 7.IX.2000:*

[48] **Մելքումյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 263:*

պատմական հաղթանակներից հետո, իրանական կողմը Հայաստանից պահանջեց «անհապաղ և պարտադիր կարգով հայկական զորքերը դուրս բերել օկուպացված ադրբեջանական տարածքներից»[49]: Հետագայում էլ պաշտոնական Թեհրանը, բացահայտորեն պաշտպանելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, հայկական կողմից պահանջում էր զորքերն անհապաղ դուրս բերել գրավյալ տարածքներից[50]: Ըստ էության, եթե ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև փոխհարաբերությունների ողջ ընթացքում եղել են տարաձայնություններ, ապա դրանք հիմնականում վերաբերել են գլխավորապես տարածաշրջանային՝ քաղաքական բնույթի շատ սակավաթիվ հարցերի: Այսպես, Իրանի իշխանությունների կողմից ոչ միանշանակ ընդունվեց Հայաստանի արտգործնախարար Վ. Օսկանյանի՝ 1998 թ. Իսրայելում արած այն հայտարարությունը, որ Հայաստանը կարող էր միջնորդի դեր ստանձնել Իրանի և Իսրայելի միջև հարաբերությունների կարգավորման հարցերում[51]: Իրանական կողմի կտրուկ, բացասական արձագանքը այդ հայտարարությանը բացատրվում էր հրեական պետության նկատմամբ Պարսկաստանի անզիջում, սկզբունքային դիրքորոշմամբ, որը, թվում է՝ պաշտոնական Հայաստանը պետք է, որ անպայման հաշվի առներ իր արտաքին դիվանագիտական գործընթացներում:

Ընդհանուր առմամբ, ինչպես վկայում են բերված փաստերը, քննարկվող ժամանակահատվածում հայ-իրանական միջպետական փոխհարաբերություններին հատկանշական էր բարիդրացիական, դինամիկ զարգացող համագործակցությունը: Ասվածի վկայությունն են նաև 2001 թ. դեկտեմբերին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի գլխավորած պատվիրակության՝ Իրան կատարած պաշտոնական այցի ընթացքում երկու երկրների միջև ստորագրված մեկ տասնյակի հասնող միջպետական կարևոր փաստաթղթերը, որոնք, զարգացնելով ու խորացնելով հայ-իրանական հարաբերությունները համագործակցության ամենատարբեր բնագավառներում, սերտ փոխգործակցության հեռանկարներ էին ստեղծում հատկապես շինարարության, էներգետիկայի, մաքսային, գիտության ու մշակույթի, պատմական հուշարձանների պահպանության ոլորտներում[52]:

---

[49] Հայաստանի Հանրապետություն, 14.VIII.1993:

[50] Նույն տեղում, 2.III.1994:

[51] Նույն տեղում, 27.XI.1998:

[52] Նույն տեղում, 28.XII.2001:

**СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ АРМЯНО-ИРАНСКИХ МЕЖГОСУДАРСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ (1990-2001 гг.)**

ПОГОСЯН Э. В.

**Резюме**

После обретения Арменией независимости между Ираном и Республикой Армения сложились добрососедские межгосударственные отношения, обусловленные как экономическими интересами, так и исторической, этнической и культурной общностью. Экономическое сотрудничество с Ираном во многом способствовало улучшению тяжелейшего социально-экономического положения Армении, в котором она оказалась в названный период в результате блокады республики со стороны Азербайджана и Турции. Неоценимую роль для блокадной Армении сыграла поставка энергоносителей из соседнего Ирана.